

## Ջավախքում իրագործվելու է երկրորդ ցեղասպանություն

**Ախալքալաք. 23. Փետրվարի** “Այսօրվա համաժողովը ոչ մի դրույք չի փոխի, թիզ անգամ չի փոխվի նախագծի մեջ”, - մտավորականների միության լիազույմար նիստի վերաբերյալ իր տեսակետն արտահայտեց Կրաստանի հայ գրողների “Վերնատուն” միության նախագահ, Նինոծմինդայի շրջանի կրթության, մշակույթի, սպորտի ծառայության պետ Գևորգ Սնիսյանը, ավելացնելով, որ քննարկված հիմնահարցերի համար լուծում գտնելը պետության իրավասության խնդիրն է:

Ախալքալաքում տեղի ունեցավ Ջավախքի մտավորականների միության 5-րդ համաժողովը, որը նվիրված էր երեք հիմնախնդրի՝ Սամցխե-Ջավախքի տարածաշրջանում հայոց լեզվի՝ որպես պետական լեզվի կարգավիճակի պահպանմանը, Ջավախքի քաղաքական իրավիճակի բարձրացմանը և Կարս-Ախալքալաք-Բաքու երկաթգծի շինարարությանը:

Համագումարին մասնակցում էին մտավորականների միության անդամները, շրջանային ժողովի 6 պատգամավորներ, Թբիլիսիի ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ, Ախալքալաքի հայկական համայնքի ներկայացուցիչներ, գյուղատնտեսության ֆերմերների միության ասոցիացիան, Նինոծմինդայի մտավորականության ներկայացուցիչներ:

Գևորգ Սնիսյանի՝ **Ջավախք-ինֆոյի** թղթակցի հետ հարցազրույցում արտահայտած կարծիքով մտավորականների համագումարը պետք է դներ միայն հոգևոր-մշակութային խնդիրների լուծման ճանապարհներ գտնելու հարց, հայ լեզվի, մշակույթի, կրոնի, սովորության և հայկական դիմագծի պահպանման խնդիր, քանի որ. “Երբ բոլորն ամեն ինչ անում են, ոչ մեկը ոչ մի բան չի անում: Ջավախքում կան բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, պետք է տարբեր լինեն յուրաքանչյուր կազմակերպության կայացրած որոշումները, այլապես, եթե քննարկվեն միևնույն հարցերը, դրանք երբեք լուծում չեն գտնի”:

Կարևորելով ազգային արժեքների ոչնչացման դեմ պայքարի խնդիրներին, մասնակիցները շոշափեցին ինքնակառավարման հարցը. “Մենք, որպես և քաղաքական, և նոր աշխարհի մաս կազմող, և հայ ժողովուրդ, պետք է աշխարհի դեմ կանգնած լինենք, ոչ թե վախենանք մեծ աշխարհի դուրս գալու վտանգից: Մեզ պետք է այլ ժողովուրդների հետ մերձենալու, բայց հայ մնալու փորձ սովորել: Մենք մեր մեջ ենք ոչնչանում որպես ազգ մեր ռուսական դպրոցներով ու այլակրոն սովորույթներով: Աշխարհի բոլոր մասերում մեր հայ համայնքները գոյատևում են իրենց ապրելու և հայ մնալու փորձով”:

Ախալքալաքի շրջանի մտավորականների միության նախագահ Ազատ Շիպակցյանի հավաստմամբ, համաժողովի մասնակիցների առաջարկությունները քննարկված հարցերի վերաբերյալ նկատի կառնվեն, սակայն Կրաստանի և Եվրոպայի օրենսդրության սահմաններում, չնայած. “Կրաստանի իշխանությունը մի ձեռքով ժողովրդին է պահում, մյուս ձեռքով՝ տուժում, չարչարում: Եթե, ինչպես իրենք են արտահայտվում, ժողովրդավար երկիր է, ու՞ր է այդ

ժողովրդավարությունը, երբ մեր ձայնը տեղ չի հասնում, մեր կայացրած որոշումները արդեն երկու տարի է արհամարհվում և պատասխան չեն ստանում”:

Ինչպես հայտնեց արև Շիպակցյանը, Կարս-Ախալքալաք-Բաքու երկաթգծի կառուցման մասին իրենց որոշումը պետք է ուղարկվի Վրաստանի Ազգային ժողով, Կրթության և գիտության նախարարություն, հանրապետության նախագահին, ՀՀ և. “...գուցե նաև՝ թուրքիա: Եթե դուք՝ Թուրքիա, ժխտում եք ցեղասպանությունը, մենք էլ չենք ուզում երկրորդ ցեղասպանություն իրագործվի: Եթե այդ ծախսերն ուզում եք անել, ներդրեք արդյունաբերությունը Ջավախքում, թող գյուղատնտեսություն զարգանա, մենք հետագայում ձեր վարկերը կվերադարձնենք”:

Հայ հասարակական կազմակերպությունների խորհրդի անդամ, Ա-ինֆո լրատվական գործակալության տնօրեն Խաչատուր Ստեփանյանի նշելով, մտավորականների հավաքը նվիրված է հիմնականում Ջավախքին հուզող մի շարք խնդիրներին, մասնավորապես Ախալքալաքում կառուցվելիք Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթգծին. “Ճիշտ է սա միջպետական նշանակություն ունեցող երկաթգիծ է, սակայն պետք է նույնպես հաշվի առնել տեղի բնակչության կարծիքը, մասնավորապես այն առումով, որ եթե մի պարագայում շեշտվում է, որ մեսխեթցի թուրքերի վերադարձը կարող է կոնֆլիկտ առաջացնել տեղացի հայերի հետ, ապա թուրքական տարրերի ներթափանցումը նույնպես կարող է կոնֆլիկտ առաջացնել տեղի բնակչության հետ”:

Խ. Ստեփանյանի կարծիքով, թուրքերն իրենց նախապես մշակած ծրագիրն են իրականացնում. ”Թուրքերը փորձեցին այլ ճանապարհով միանալու ադրբեջանցիների հետ, չի ստացվում, հիմա փորձում են Վրաստանի միջոցով իրագործել, պարզապես Կարս-Ախալքալաք երկաթգծի կառուցումը Թուրքիայի և Ադրբեջանի հիմնական մասի միջև տրանսպորտային կապի ստեղծում է”:

Ախալցխայի հայ համայնքի ներկայացուցիչ, նախկին “Շառլ Ազնավուր” բարեգործական ընկերության նախագահ Գևորգ Պետրոսյանը, խոսելով Ախալցխայի հայության անունից, վտանգավոր համարեց շինարարության ծրագիրը, որն իրենց շահերին չի համապատասխանում և Ախալցխայի զարգացման վրա կունենա բացասական ազդեցություն:

Համաժողովի ընթացքում հնչած բազմաթիվ առաջարկություններից էին Ջավախքի հայ բնակչության արտահոսքի նվազեցման, սոցիալական վիճակի բարելավման, ինքնավարության հաստատման, տեղական հանքանյութի օգտագործման, աշխատատեղեր ստեղծելու, արտագնացության, այցեիրավերների, ղեկավար մարմինների ներկայացուցիչների ընտրության, երկաթգծի հարցը օրակարգից հանելու, ավտոմայրուղու շինարարության, հայոց լեզուն, եթե ոչ պետական, գոնե՝ տարածաշրջանային լեզվի կարգավիճակ տրամադրելու հիմնախնդիրները:

**Մնում է միայն Ջավախքը լքել**

**Ախալքալաք. 23. Փետրվարի** Վրաստանի Ֆինանսական ոստիկանությունը քրեական գործ է հարուցել ՀՀ-ից Ջավախք “Ավշար” օղու, “Բջնի” և “Արզնի” հանքային ջրերի և “Կոտայք” գարեջրի ներմուծող Սամվել Մանուկյանի նկատմամբ:

Ըստ **Ջավախք-ինֆոյի** աղբյուրի, Վրաստանի հարկային տեսչությունը մոտ օրերս պատրաստվում է Սամվել Մանուկյանի անունով տուգանք ուղարկել 420000 լարիի չափով (մոտ 250 հազար ամերիկյան դոլար):

Ըստ Վրաստանի քրեական օրենսդրության, ակտի ստացման պահից 45 օրվա ընթացքում քաղաքացին պարտավոր է կատարել որոշումը:

**Ջավախք-ինֆոյի** թղթակցի հետ հարցազրույցում, Մանուկյանին մոտ կանգնած անձանցից մեկը նշեց, որ Մանուկյանը յուրաքանչյուր բեռնատարի անցկացման համար, միջին հաշվով, 25 հազար լարի տուրք էր վճարում, (մոտ 15 հազար ամերիկյան դոլար), ինչը գերազանցում է տեղական արդյունաբերողի վճարած հարկին:

**Ջավախք-ինֆոյի** թղթակցի հետ զրույցում, ՀՀ-ից Ջավախք մեկ այլ ներմուծող, որի անունը Ջավախք-ինֆոն, հասկանալի պատճառներով, չի նշում, նշեց, որ գործն ամբողջովին սարքված է, չունի ոչ մի իրավական հիմք, հետապնդում է տարածաշրջանից ՀՀ-ին տնտեսապես դուրս մղման նպատակ և անհրաժեշտություն կա, որպեսզի ՀՀ-ում արտադրողները իրենց ունեցած հնարավոր միջոցներով ճնշում գործադրեն և կանխեն տվյալ ծրագրի իրականացումը, այլապես, մեզ մնում է միայն Ջավախքը լքել:

Հիշեցնենք, որ Ախալքալաքում հունվարի 30-ին ձերբակալվել էին “Ջերմուկ» հանքային ջուր և «Կիլիկիա» գարեջուր ներկրողներ Մերուժան Կարոյանը եւ Արմեն Ուզունյանը, ովքեր մեղադրվում էին Բաթումիում բնակվող ոմն Տանյայի առեւանգման մեջ:

Ըստ **Ջավախք-ինֆոյի** աղբյուրի, Մերուժան Կարոյանի և Արմեն Ուզունյանի անունով “Ջերմուկ” հանքային ջրի ներմուծման հետ կապված, Վրաստանի հարկային տեսչությունն ուղարկել է 100 հազար լարիի չափով տուգանք (մոտ 60 հազար ամերիկյան դոլար):

**Վրացիները կհնոնկար են հանել Սամցխե-Ջավախքի մասին**

“ Ա յ ւ օ ր Վ Ր Ա Ս Տ Ա Ն Ի մ ա յ ր ա ք ա ղ ա ք ն լ մ կ ա մ  
ն ր ա ա յ լ տ ա ր ա ծ ա շ ր ջ ա ն ն ե ր ն լ մ ,

Սամցիւէ Չաւախքի մասսին տրվում է  
 միայն քաղաքացիական տեղեկատվություն ,  
 բնական հակառակուսացիակալան կամ էթնիկ  
 հոգի վրա առաջացած ընդհարումն էր ի  
 կամ դժգոհությունն էր ի փաստեր : Այդ  
 մասին “Նոր 7 օրեր” թերթին տրված  
 հարցազրույցում նշել է “Ես”  
 Վրաստանի քաղաքացի էմ  
 վավերագրական կինոնկարի  
 հեղինակները գրում են , Գիա Կուրճավան ,  
 որի 2 նոր հանդեսը տեղի ունեցավ  
 փետրվարի 14-ին , Թբիլիսիի Գրիգոր  
 Ռաբակիձեի անվան համալսարանում :  
 Կինոնկարը , որը պատրաստել է  
 նախաձեռնող խումբը Գիա Կուրճավանի ,  
 Սերգո Բիցաձեի , Անա Ալավերդյանի  
 ներքին կազմով , պատմում է  
 հայաբնակ Սամցիւէ Չաւախքի  
 տարածաշրջանի նայնտեղ գոյությունն  
 ունեցող խնդիրներին մասին : Այս մասին  
 հայտնում է Բագին-ինֆոլրատվական կենտրոնը :

Կուրճավանի խոսքերով , այս  
 տարածաշրջանում խնդիրները , երկար  
 ժամանակի ընթացքում են կուտակվել :  
 Կոմունիստները 2 շրջանում այս  
 տարածքը հայտարարված էր  
 սահմանային և այնտեղի  
 բնակչությունը լինվի կտրվել էր  
 մնացած Վրաստանից : “Կինոնկարի վրա  
 աշխատելու ժամանակ մենք տեսանք , որ  
 տարածաշրջանի բնակչությունը  
 ցանկանում է ինտեգրվել մնացյալ  
 Վրաստանի հետ : Սակայն առկա են 2 տո  
 խանգարող հանգամանքներ : Օրինակ ,  
 ճանապարհները խնդիրը ,  
 հաղորդակցման քաղաքացիականությունը :  
 Այս երկրամասի գյուղերի  
 բնակչությունը (նվազագույն  
 ալեհավաքներ) չեն կարողանում դիտել  
 վրացական հեռուստատեսություն  
 հաղորդաշարերը : Նրանք դիտում են

միայն հայկական հեռուստատեսությունն ունի **ONS** հեռուստատեսությունը, նշեց նա:

Կինոնկարում պատմվում է նաև Փոկազյանի նկարում կանանց մայրավանքի կողմից հիմնադրված վրացերեն լեզվի դասընթացները մասին, որտեղ վրացերեն լեզուն հիմնականում սովորում են հայ քնակչությունը: Մակայն, ասում է Կուճավան, խոսք է գնում նաև այն մասին, որ տարածաշրջանի երիտասարդությունը ունի համար հիմնականում մեկնում են Հայաստան կամ Ռուսաստան: “Այն քանից հետո, երբ Վրաստանում անցան ազգային միասնական քննությունները համակարգին, այս տարածաշրջանից վրացական ԲՈՒՀ-երը նորին վեցին միայն երկու ուսանող՝ դիմորդները **80%** մեկնեցին Հայաստան Ռուսաստան, իսկ նրանցից **50%** այնտեղ դարձավ ուսանող”, - նշեց կինոնկարի համահեղինակը, ավելացնելով, որ լեզվական խոչընդոտը, իրոք խնդիրներ է ստեղծում այն հաղթահարելու համար անհրաժեշտ է երկարատև աշխատանք: “Ինտեգրման գործընթացը պետք է իրականացվի երիտասարդության ակարդակով”, - գտնում է Կուճավան:

Չրա հետ մեկտեղ, նա նկատում է, որ “տեղական վրացիները և հայերը միջև չկան չմի հակադրություններն դիտարկում: Նրանք ոչինչ չունեն քաժանեկու: Տարածաշրջանում հիմնականում գոյություն ունեն ընդհանուր սոցիալական խնդիրներ և դրանց լուծումը պահանջում է ժամանակ և երկարատև աշխատանք”:

Անդրադարձն անվարձ ինքնին կինոնկարի  
 ցուցադրմանը, Գիտ Կուճավան ասաց .  
 “Կինոնկարի ներկայացմանը մենք հրավիրել  
 ենք շատ քաղաքական գործիչներին, ինչպես  
 պառլամենտական, այնպես էլ ոչ  
 պառլամենտական շրջանակներին : Սակայն ,  
 եկան միայն “Նոր աջեր” (ընդդիմունություն –  
 խմբ.) կուսակցության ներկայացուցիչները .  
 Փիքրիա Չիխրաձեն , Մամուկա Կացիտաձեն և  
 Մանանա Նաճկեֆիան : Մյուս քաղաքական  
 ուժերը իրենց անհանգստություն  
 չպատճանեցին” :

Նշենք , որ նախագիծը ֆինանսավորվել  
 է “Բաց հասարակություն” Վրաստան  
 կազմակերպության կողմից :  
 Վավերագրական կինոնկարի  
 չափանիշները չեն խախտվել ,  
 հեղինակները կարողացել են  
 հիմնական գաղափարը տեղավորել 26  
 րոպեներին մեջ : Հետագայում  
 վավերացվել են կարգեր հետգրություն  
 ձևով , որի տևողությունը մի քանի  
 րոպե է :

Մամուլի “Ջավախքի մասին  
 վավերագրական կինոնկարի  
 ցուցադրումը նախատեսված է նաև  
 Թբիլիսիի պետական համալսարանում :  
 Մոտ ժամանակներու հեղինակները  
 նախատեսում են ցուցադրել  
 կինոնկարը նաև Ախալցխայի  
 ուսանողներին համար : Կինոնկարի  
 հեղինակները հույս ունեն , որ  
 Վրաստանի հանրային  
 հեռուստատեսությունը ևս էթեր  
 կտրամադրի “Ես Վրաստանի քաղաքացի  
 եմ” կինոնկարի ցուցադրման համար :  
 Այդ մասին , նրանք ունեն քանավոր  
 համաձայնություն հանրային  
 հեռուստատեսություն  
 դեկավորություն հետ :